№ 164 ՈՒՐԲԱԹ ՆՈՅԵՄԲԵՐԻ 23 1907 ՈՒՐԲԱԹ ՆՈՅԵՄԲԵՐԻ 23 № 164

ԵՐԵՍՈՒՆՀԻՆԳԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐՇԱՐՈՒՆԻ

Տարեկան գինը 10 րուբլի. կէս տարվանը 6 րուբլի.
Առանձին համարները ԱՄԵՆ ՏԵՂ. 5 ԿՈՊ.
Թիֆլիսում գրվում են խմբագրութիւնում մէջ.
Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція „Мшакъ" Базарная ул. д. Тамамшева № 16.
Կամ Tiflis, Rédaction „Mschak".
Տելեֆոն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 (բացի կիրակի և տօն օրերից).
Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով
Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ.
Տելեֆոն № 253.

ԲԱՑՎԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ՄՇԱԿ

քաղաքական եւ գրականական լրագրի

ԱՌԱՋԻԿԱՅ **1908** ԹԻՒԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ

(36-րդ ՏԱՐԻ)

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆԸ. «Մշակի» տարեկան գինը 10 րուբլի է, տասն և մէկ ամսվանը 9 ր., տասն ամսվանը՝ 9 ր., ինն ամսվանը՝ 8 ր., 8 ամսվանը՝ 7 ր., էօթ և վեց ամսվանը՝ 6 ր., հինգ ամսվանը՝ 5 ր., չորս ամսվանը՝ 4 ր., երեք ամսվանը՝ 3 ր. մէկ ամսվանը 1 րուբլի։

Ամերիկայի բաժանորդները պէտք է վճարեն տարեկան 6 դօլար. Եւրօպայի բաժանորդները՝ 30 ֆրանկ. Պարսկաստանի բաժանորդները՝ 10 րուբլի։

«Մշակին» գրվել կարելի ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ. (Բազարնայա և Բարօնսկայա փողոցների անկիւնը)։

Մեր հասցէն. ТИФЛИСЪ, Редакція «МШАКЪ». արտասահմանից՝ TIFLIS, Rédaction du journal «MSCHAK».

ԱՊԱՐԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

Անանա Դաւթեան, Գարեգին, Մարիամ, Եղիսաբէթ Ռաֆայէլեան, Իսահակ և Գրիգոր Յակոբեանները խորին վշտով յայտնում են ազգականներին և ծանօթներին՝ առաջինը իր անմոռանալի ամուսնու, երկրորդը թանգագին հօր, երրորդը սիրելի եղբօր, չորրորդը յարգելի փեսայի, միւսները սիրելի եղբօր՝

ՅՈՎՍԷՓ ԱԻԱԳ ՔԱՀԱՆԱՅ ԱՄԻՐԱՂԵԱՆՑԻ

մահվան քառասունքի օրը Քութայիս քաղաքի ս. Գէորգ եկեղեցում, նոյեմբերի 25-ին, կիրակի օրը ժամը 11-ին կը կատարվի հոգեհանգիստ։

1—1

ԹԻՖԼԻՍԻ ԺՈՂՈՎԱՐԱՆ

Թիֆլիսի ժողովարանի աւագների խորհուրդը յայտնում է ի գիտութիւն պ. պ. անդամների և կանդիդատների, որ ուրբաթ, նոյեմբերի 23-ին, երեկոյեան ժամը 8-ին նշանակված է ընդհանուր ժողով, քննելու Թայիրովից ամարային շինութիւնը վարձելու հարցը։

(17, 18, 23) աո. 3—3

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Պատգամաւորութեան առիթով. Արդար պահանջ. Վերջին տեղեկութիւններ. ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ.—Տաւրիկեան պալատից. Պետական Դումայի վերջին նիստերը. Պետական Դումայի շուրջը. Կաթողիկոսի ընտրութիւնը. Նոր-Բայազէտի սովեալների օգտին. Պէտք է զգուշանալ. Ներքին լուրեր. Ռուսաստանի կեանքից. Ուղղում սխալի. ԱՐՏԱՍԱՀՄԱՆԻՑ ՏԵՍՈՒԹԻՒՆ.—Արտասահմանի հայերի կեանքից. ՔԱՂԱՒԱԾՔՆԵՐ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ։

ՊԱՏԳԱՄԱՒՈՐՈՒԹԵԱՆ ԱՌԻԹՈՎ

II

Մենք ասացինք, որ ոչ պաշտօնական և ոչ մասնաւոր կերպով չէ կազմված մեր գիւղական իրականութեան ճիշտ նկարագիրը։

Այո, այդ նկարագիրը չը կայ։

Ճիշտ թիւը չեն ժողովված, աղէտի մեծութիւնը չէ արձանագրված և ուրեմն կարիքի բանակն էլ չէ պարզված։

Պաշտօնական տեղեկութիւնները հաշուի չեն առել այն վերջին մեծ պատուհասի հասցրած վնասները, որի մասին մենք յիշատակեցինք անցեալ անգամ։

Մեր խօսքը այն անօրինակ մեծ ձիւնի մասին է, որ տեղաց հոկտեմբերի 20—28-ին ընդարձակ տարածութեան վրա։

Սկսած Սեւ-ծովից մինչև Կասպից ծովը՝ այդ միջոցին նախ տեղային անձրևները և ապա եկաւ յորդ ձիւն, որը լեռնային մասերում 1—2 արշին հաստութեամբ ծածկեց երկիրը և մի անգամից հոկտեմբերի աշնանային օրերը դարձրեց խոր ձմերային, ինչպէս յունվարին։

Զանգեզուրի, Նոր-Բայազէտի, Ալէքսանդրօպոլի, Բօրչալուի, Ղազախի, Ջիվանշիրի, Շուշու և Դարալագեազի գաւառների բարձրադիր տեղերում ձիւնի տակ թաղվեցին դեռ չը կալսված հացահատիկները և նոյն իսկ չը հնձված արտերը, հողի և ձիւնի տակ մնացին գետնախնձորի ցանքսերը, սեացան և փետեցին խոտերը։

Ընթացքի աւազանի տափարակում, ուր ցանում են բամբակ և բրինձ, ձիւնից մնասվեց բերքը, խաղողը փչացաւ, չամիչը սեացաւ և պտղատու ծառերի ճիւղերը այնպէս կոտրատվեցին, որ այդպիսութեան եկամուտները կարող են նուազել յետագայ տարիներում։

Աշնանացանը, որ ուրիշ տարիներ լեռնալանջերում և տափարակներում շարունակվում էր մինչև նոյեմբերի վերջը, ընդհատվեց և շատ արտեր մնացին առանց սերմելու։

Գիւղացին ստիպված եղաւ տնային անասուններին փակել տանը և կեղակրել նրանց պատրաստի խոտով ու զարմանով։ Իսկ պաշարները գիւղական տանը առանց այն էլ շատ քիչ էին այս տարի։

Ի՞նչ պէտք է անէը գիւղացին։

Նա արդէն ծախել էր տնային անասունների մի մասը հաց գնելու համար։ Նա այժմ վճռեց աւելի ևս պակասեցնել անասունների թիւը և զբկվել կովերից, եզներից և ոչխարներից։

Ձանապարհները փակվեցին, երբ նա դեռ տուն չէր բերել դաշտերից խուրձերը և դէզերը, անտառից փայտ և վառառնոցից ու ջաղացից ալիւրը և ուրիշ մթերքներ։

Հացի գինը բարձրացաւ մինչև 2 րուբլի և նոյնիսկ մի քանի տեղերում մինչև 2 ր. 40 կ. և 3 րուբլի պուդը։

Կարօտութեան սպառնալիքը, որ ամառվայ վերջերից արդէն նշմարվում էր գիւղացու առաջ, յանկարծ թափվեց նրա գլխին ուժգին կերպով և մի անգամից աղէտալի դարձրեց նրա կեանքը ձմեռվայ համար։

Այդ վերջին մեծ պատուհասի հետ կապված ձախորդութիւնը և աղէտը խորտակեցին և այն փոքր ի շատէ համեստ յոյսերը, որ ունէին լեռնականի գիւղացիները, և աւելի ևս անդնդախոր դարձրին երկրի տնտեսական դրութիւնը։

Եւ որովհետև երկրի վիճակի մասին եղած պաշտօնական հաղորդագրութիւնները հաշուի չեն առել վերջին ժամանակի զժբաղդութիւնները, ուստի և նկարում են իրերի դրութիւնը աւելի նպաստաւոր, քան նա կայ իսկապէս։

Ա. Բալանթար

ԱՐԴԱՐ ՊԱՀԱՆՋ

Պարսկաստանի հայերը, ինչպէս հաղորդում է «Նոր-Ջուղայի Լրաբերը», մտադիր են հարց յարուցանել, որ պարսկական մէջլիսի կամ պարլամենտի մէջ հայ ժողովուրդը ունենայ 2 պատգամաւոր։

Իրանց այդ պահանջը պարսկահայերը հիմնում են հետեւեալ իրաւունքի վրա։

Երբ հանգուցեալ Մուզաֆֆէրէդդին շահը տուեց Պարսկաստանին սահմանադրութիւն և իր հրովարտակով հիմք դրեց պարլամենտական բէժիմի, հայերի մասնակցութեան խնդիրը անորոշ էր թողնված հրովարտակի մէջ։ Եւ որովհետև առհասարակ պարսկահպատակ օտար դաւանութեան պատկանող ազգերի մասին ևս ոչ մի յիշատակութիւն չը կար հրովարտակի մէջ, և մէջլիսը իր առաջին նիստերում նոյնիսկ որոշեց, որ օտար դաւանութեան պատկանող կամ ոչ-մուսուլման ազգերը (գերը պարսիկ, հայ, հրէայ, ասորի, եզիդի) մուսուլմանների հետ հաւասար իրաւունք չեն վայելում, ուստի հայերը ամեն կողմից բողոքներով և զեղերագրերով դիմեցին թէ շահին, թէ մէջլիսին և խնդրեցին տալ իրանց ևս նոյն իրաւունքները, ինչ որ մուսուլման հպատակներին։ Այդ բողոքները և դիմումները ունեցան իրանց ազդեցութիւնը, և թէ բարձր իշխանութիւնը, թէ մէջլիսը յայտարերեցին պաշտօնապէս, թէ շահընշահի շնորհած սահմանադրութեան օրէնքների հիման վրա, բոլոր հպատակներին, առանց դաւանութեան խտրութեան, իրաւունք է տրվում մասնակցելու ընտրութիւններին և պատգամաւորներ ընտրելու։

Այդ որոշումը արտաքին գործերի մինիստրը պաշտօնական գրութեամբ հաղորդել է Սպահանի հայոց առաջնորդարանին։

Ուրեմն սկզբունքով ընդունվել է, որ հայերը թէ ներգործական և թէ կրաւորական ընտրողական իրաւունք ունեն։

Եւ հիմնվելով այդ իրաւունքի վրա մի կողմից, միւս կողմից ընդունելով Պարսկաստանի բոլոր հայերի թիւը՝ 80,000, հայերը պահանջ են դրել, որ ունենան 2 պատգամաւոր կամ ներկայացուցիչ պարսկական պարլամենտում, քանի որ ամեն 40,000 հոգին տալիս է մի պատգամաւոր։

Հայերը ունեն երկու թեմ—Ամրպատականի և Նոր-Ջուղայի, և ամեն մի թեմ պէտք է ընտրէ մի պատգամաւոր և ուղարկվի Թէհրան՝ մէջլիսին մասնակցելու։

Մեծ յոյս կայ, որ պարսից կառավարութիւնը և մէջլիսը յարգեն հայերի խնդիրը, և հայերը շուտով ստանան իրաւունք իրանց երկու պատգամաւորներն ունենալու պարսկական պարլամենտում։

Պէտք է միայն աշխատել, որ այդ պատգամաւորները արժանաւոր և իրանց կոչման բարձրութեան վրա կանգնած մարդիկ լինեն։

Հ. Առաքելեան

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Նոյեմբերի 13-ին կայսրութեան մատակարարողական գործի ժամանակաւոր կառավարիչ Ս. Ն. Դերբելի նախագահութեամբ կայացած խորհրդակցական հերթական նիստում մատակարարութեան հարցի առիթով որոշված է. 1) յարգել Գովկասի Փոխարքայի միջնորդութիւնը՝ յատկացնել 19,239 րուբլի Երևանի նահանգի Նոր-Բայազէտի գաւառի հեղեղներից, կարկտահարից և ցրտերից վնասված 12 գիւղերի բնակիչներին փոխարինաբար բաժանելու նպատակով, երեք տարի ժամանակ նշանակելով այդ փոխարինութիւնը վճարելու համար։ Այդ որոշումը ներքին գործերի մինիստրը հաստատել է նոյեմբերի 15-ին։ («Рос.»)

Կ. Պօլսից «Politische Correspondenz» լրագրին հաղորդում են, որ Բիթլիսի և Մամուրէտ-իւլ-Ազիզ վիլայէթներից վերջին ժամանակներս հայերը խրամբերով գաղթում են Ամերիկա։ Նոյն երևոյթը նկատվում է նաև Էրզրումի և Սըվազի վիլայէթներում։ Վերջապէս, Վանի վիլայէթի հայերն էլ գաղթում են մասամբ Պարսկաստան, մասամբ Ռուսաստան։ Թիւրք կառավարութիւնը արգելք չէ դնում այդ գաղթականական շարժման այն պայմանով, որ պէտք գաղթողները մէկ անգամ ընդմիշտ պարտաւորվեն հրաժարվել թիւրքահպատակութիւնից և Թիւրքիայի սահմանները վերստին վերադառնալուց։

Իբրև գաղթի պատճառ, գաղթողները մատնանշում են գոյութեան միջոցների պակասութիւնը՝ մի կողմից և քրդական ցեղերի երեսից սպառնացվող վտանգը միւս կողմից։ Սակն շարունակ մեկնող նաւերը բազմաթիւ գաղթականներ են տանում օտար երկիրները։

Թիւրքաց կառավարական շրջաններում պնդում են, որ վերջին ժամանակներս Թիւրքիայի սահմաններից ահագին քանակութեամբ գէնք է ներմուծվել և որ այդ գէնքը յատկապէս բերվել է հայերի համար։ Կ. Պօլսում հաւատացնում են, որ յիշեալ վիլայէթներում տեղի ունեցող բոլոր դէպքերը արդէն գրաւել են Բ. Դրան ուշադրութիւնը և որ այդ պատճառով վերջինս, ամենայն հաւանականութեամբ, անհրաժեշտ կը համարէ ձեռնամուխ լինել բարենորոգումներին՝ յիշեալ շրջանների ազգաբնակութեան դրութիւնը բարելաւելու համար։

Եւրօպական շրջաններում ազմուկ է առաջացրել այն լուրը, թէ Ամերիկան հրաժարվել է ստանալ Չինաստանից 44 միլիոն պարտքը։ Ամերիկայի այդ մեծահոգութիւնը բացատրում են նրանով, որ նա ուզում է այդպիսով վաստակել Չինաստանի համակրութիւնը։ («Р. Сл.»)

«Times» լրագրի Թէհրանի թղթակիցը հաղորդում է, որ Պարսկաստանը ներկայումս գտնվում է խոշոր անցքերի նախօրեակում։ Մզկիթներում բացարձակ կերպով ապստամբութիւն են քարոզում շահի դէմ, որին մեղադրում են՝ թէ նա ինտրիգներ է լարում սահմանադրութեան դէմ։ Շահը նոր հաստատիացումներ է ուղարկել պարլամենտի նախագահին, յայտնելով իր անդրդուելի հաւատարմութիւնը սահմանադրութեան։ Պարսկական սահմանադրականները շրջաբերականներով տեղեկացրել են բէակցիօներներին, որպէսզի նրանք վերջ տան իրանց ինտրիգներին, ապա թէ ոչ գաղտնի կազմակերպութիւնները ինքնագատասանի կենթարկեն նրանց։ Այդ տեղեկութեան աղբիւրն «Daily Telegraph»-ին հաղորդում են Պետերբուրգից, որ ռուսաց գինուորական շրջանները սաստիկ անհանգստանում են Պարսկաստանում գտնվող ռուսահպատակների վիճակի մասին, ի նկատի առնելով պարսկական դեմոկրատների թշնամական տրամադրութիւնը ռուսահպատակների դէմ։ («Р. Сл.»)

Ուրմիա.—Փիլպինների կազմակերպութեան անկարգութիւնները ստիպեցին նահանգապետին անջումանի հաւանութեամբ խնդրել պատշաճաւոր իշխանութիւնից, որ թոյլատրվի պարագլուխներին աքսորել։ Նոյեմբերի 14-ին, երբ կամենում էին այդ միջոցը գործադրել, Փիլպինները միանալով խուժանի հետ փակեցին շուկաները և պահանջեցին՝ հեռացնել նահանգապետին, սպառնալով սպանել նրան։ Նահանգապետը փախաւ։ Երէկ նա իսկոյն հրաման ստացաւ վերադառնալ, բայց առայժմ նա չի եկել։ («К.»)

Թէհրան.—Անցեալ չորեքշաբթի երեկոյեան շահը իր մօտ կանչեց մէջլիսի պատգամաւորութեան։ Մինիստրների կաբինետը յայտնեց, որ երկրում անկարգութիւնները չեն դադարում, մինչդեռ մէջլիսը զբաղվում է այնպիսի գործերով, որոնք վերաբերում են գործադիր իշխանութեան. իսկ այդ հանգամանքը արգելում է մինիստրներին կատարել իրանց գործը։ Միւս կողմից անջումանները չեն զբաղվում իրանց գործերով, խռովութիւն են սերմանում ամբողջ երկրում և խանգարում են մէջլիսին և նրա պարապմունքներ։ Ուստի և շահը առաջարկեց մինիստրներին մի քանի օրվայ ընթացքում միակել գործադրութիւնների ծրագիրը՝ երկիրը հանգստացնելու համար, հակառակ դէպքում նա ինքը կը զբաղվէ այդ գործով։ («К.»)

Թէհրան.—«Մէջլիս» լրագրում տպված է պարլամենտին տուած շահի հրովարտակի բնագիրը, որի մէջ բոլորներս են յայտնվում, որ զանազան անջումաններ խառնվում են գործադիր իշխանութեան իրաւասութեան մէջ, որով անկարգութիւններ են առաջանում թէ մայրաքաղաքում և թէ ամբողջ երկրում։ Շահը խնդրում է պարլամենտին՝ օրէնքներ հրատարակել բռնութիւն գործ դնողներին պատժելու համար և այսուհետև ամբողջովին գաւել գործադիր իշխանութիւնը օրէնսդրական իշխանութիւնից՝ և աւելացնում է, որ պարլամենտին մի իրաւունք է միայն վերապահված—օրէնսդրական—և նա պէտք է հրաժարվի գործադիր իշխանութիւնից։

Լրագիրը ասում է, որ հրովարտակը կարդալուց յետոյ տեղի ունեցան տաք և կրակոտ վիճաբանութիւններ։ Պատգամաւորները, յայտնելով որ իրանք բնաւ չեն խառնվում գործադիր իշխանութեանը, ասացին, որ անջումանները մեղաւոր են, որ միջամտում են, և առաջարկեցին արձակել անջումաններին, որոնք գործում են գործադիր իշխանութեան դէմ և խանգարում են նրան՝ կարգադրութիւններ անելու։

Պարլամենտը կը կազմէ մի նախագիծ, իբրև պատասխան հրովարտակին։ («К.»)

Թաւրիզ.—Գեներալ-նահանգապետը կարգադրեց քաղաքապետին միջոցներ ձեռք առնել ձերբակալելու պալատական երգեցիկ խմբի խմբապետ Նաբը-էն-Նիզամին մահացու կերպով վիրաւորողներին և միևնոյն ժամանակ մատնանշեց, որ առհասարակ քաղաքում ապահովութիւն չը կայ, և շրջունակ սպանութիւններ և մահափորձեր են կատարվում։ Ի պատասխան գեներալ-նահանգապետի այս կարգադրութեան, գիշերս յեղափոխականները սպանեցին քաղաքամատերից մէկին Թաղապետին, կոտրեցին հեռախօսի թելերը և պահական գինուորներից խլեցին մի քանի հրացաններ։ Շուկաները մինչև կէսօր փակ էին։ («К.»)

Կ. Պօլիս.—Եանինայի վալին, առաջին զօրաբանակի հրամանատար Սէյֆուլլահ-փաշան, նշանակված է Սկիւտարի վալի և գինուորական կօմենդանտ։ Վերջերս Սկիւտարի վալի նշանակված Իզմայիլ-փաշան այդ պաշտօնը վարեց միայն վեց օր։ («К.»)

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՏԱՒՐԻԿԵԱՆ ՊԱԼԱՏԻՑ

(Մեր փոխանի թղթակից)

Պետերբուրգ, 10 նոյեմբերի

«Գործունեայ» Դուման ունեցաւ և չորրորդ նիստը։

Ինչպէս և անցեալ նիստին, ասին մի 5 րոպէից յետոյ ընդմիջում էր տեղի ունենում կէս կամ մէկ ժամով։ Այսօր պէտք է մի շարք կօմիսիաների համար անդամներ ընտրէին։ Դա հոկտեմբերականների առաջարկութիւնն էր. նրանք ներկայացրել էին մի ահագին ցուցակ գանազան կօմիսիաների և պահանջում էին, որ Դուման անպատճառ այդ բոլոր կօմիսիաների համար անդամներ ընտրի։ Թէև առաջարկողներ են լինում, թէ այս կամ կօմիսիան առայժմ ոչ

◆ Փիլիսոփայական ընկերության ժողովը տեղի կունենա կիրակի, 5 մարտի, ժամը 2 ½-ին, Ներսիսյան դպրոցում։

◆ Ֆիլհարմոնիկ ընկերության համերգը տեղի կունենա կիրակի, 5 մարտի, ժամը 2 ½-ին, Ներսիսյան դպրոցում։

◆ Ուսումնական նպատակներով ընկերության ժողովը տեղի կունենա կիրակի, 5 մարտի, ժամը 2 ½-ին, Ներսիսյան դպրոցում։

◆ Ֆիլհարմոնիկ ընկերության ժողովը տեղի կունենա կիրակի, 5 մարտի, ժամը 2 ½-ին, Ներսիսյան դպրոցում։

◆ Ուսումնական նպատակներով ընկերության ժողովը տեղի կունենա կիրակի, 5 մարտի, ժամը 2 ½-ին, Ներսիսյան դպրոցում։

◆ Փիլհարմոնիկ ընկերության համերգը տեղի կունենա կիրակի, 5 մարտի, ժամը 2 ½-ին, Ներսիսյան դպրոցում։

◆ Փիլիսոփայական ընկերության ժողովը տեղի կունենա կիրակի, 5 մարտի, ժամը 2 ½-ին, Ներսիսյան դպրոցում։

◆ Ուսումնական նպատակներով ընկերության ժողովը տեղի կունենա կիրակի, 5 մարտի, ժամը 2 ½-ին, Ներսիսյան դպրոցում։

◆ Ֆիլհարմոնիկ ընկերության համերգը տեղի կունենա կիրակի, 5 մարտի, ժամը 2 ½-ին, Ներսիսյան դպրոցում։

◆ Ուսումնական նպատակներով ընկերության ժողովը տեղի կունենա կիրակի, 5 մարտի, ժամը 2 ½-ին, Ներսիսյան դպրոցում։

◆ Փիլհարմոնիկ ընկերության համերգը տեղի կունենա կիրակի, 5 մարտի, ժամը 2 ½-ին, Ներսիսյան դպրոցում։

◆ Փիլիսոփայական ընկերության ժողովը տեղի կունենա կիրակի, 5 մարտի, ժամը 2 ½-ին, Ներսիսյան դպրոցում։

◆ Ուսումնական նպատակներով ընկերության ժողովը տեղի կունենա կիրակի, 5 մարտի, ժամը 2 ½-ին, Ներսիսյան դպրոցում։

◆ Ֆիլհարմոնիկ ընկերության համերգ